Հովհաննես Թումանյան

Երգչի վրեժը

Ծանր հեծության ժամանակների
Եվ ճընշումների անըզգա որդիք,
Կամեցա սիրել, սակայն դուք բարի
Սիրտըս ու հոգիս զայրույթով լցրիք:

Բայց դրա համար ես այնպես կերգեմ,
Որ այդ ձեր սիրտը ցավից պատառի,
Տըխուր ձայներով կըթունավորեմ
Հանգստությունը գալոց օրերի:

Հուսահատության թախծալի երգով

Լեղի կըդարձնեմ ձեր կյանքը բոլոր,
Եվ դուք կարտասվեք լիացած աչքով,
Խնջույքների մեջ նստած գըլխակոր:

Եվ խիստ վըրեժը զայրացած երգչի
Ձեզ կըհետևի մինչև գերեզման,

Ձեր սիրտը կայրի, հոգին կըտանջի...
Եվ կըտառապեք այսպես հավիտյան:

1891

Յատուկ Պոեմ